

ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Կոնցեռն-Էներգոմաշ ՓԲԸ-ն ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/96 ծածկագրով կազմակերպված Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում
Ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի		
	մակնիշը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
5	UVC/T-AR, PCR cabinet	Biosan	<p>Մաքուր պահարանը նախատեսված է այնպիսի նմուշների հետ աշխատելու համար, ինչպիսիք են ԴՆԹ/ՌՆԹ պարունակող նմուշները: Ունի ուլտրամանուշակագույն լամպ պարբերաբար ախտահանման համար: Այն հարմար է լաբորատոր սեղանի վրա տեղադրելու համար: Ունի մետաղական կարկաս, պատերը՝ պլեքսիգլաս, ներկված էմալե մակերեսներ: ՌԲՄ լամպը ախտահանում է աշխատանքային տարածքը 15-30 րոպե ազդեցության ընթացքում, որը կարգավորվում է թվային ժամանակաչափով՝ քայքայելով առկա ԴՆԹ/ՌՆԹ հատվածներ: Ունի լուսային լամպ՝ ապահովելու պատշաճ լուսավորություն: Հագեցած է հոսքային տիպի մանրէասպան ուլտրամանուշակագույն մաքրող-ռեցիրկուլյատոր AR համակարգով, որն ապահովում է պահարանում մշտական ախտահանում աշխատանքի ընթացքում: Համակարգը բաղկացած է ՌԲՄ լամպից, օդափոխիչից և վերջին սերնդի ֆիլտրերից և ունի այնպիսի տեղադրություն, որի աշխատանքի ժամանակ շահագործողը պաշտպանված է ՌԲՄ ճառագայթների ազդեցությունից: Օդի վերաշրջանառությունը մեծացնում է</p>

ուլտրամանուշակագույն լույսի առավելագույն ազդեցությանը՝ այն դարձնելով բավականաչափ արդյունավետ աղտոտիչ ԴՆԹ/ՌՆԹ մոլեկուլների քայքայման համար: ՈւՄ լամպերը ունի միջինը 9000 աշխատանքային ժամ: Պահարանը ունի ավոտմատ անջատման համակարգ ՈւՄ լամպի անջատման, երբ պահարանը բացվի: Աշխատանքի ընթացքը ապահովվում է ցածր աղմուկով և էներգիայի սպառմամբ: Պատերի նյութը՝ պլեքսիգլաս. պոլիմեթիլ մետակրիլատ ALTUGLAS EX, Աշխատանքային մակերեսի նյութը՝ չժանգոտվող պողպատ՝ քիմիական նյութերի նկատմամբ բարձր դիմացկունությամբ: Բաց ՈՒՄ լամպ՝ 1 x 25Վ ներկառուցված պահարանում (մանրէասպան UV-C, TUV 25W 1SL/25), ՈւՄ ճառագայթման մակարդակ՝ 18 մՎտ/սմ²/վրկ ճառագայթման տեսակ՝ ՈւՄ ($\lambda = 253.7$ նմ), օզոնից զերծ Ուղիղ ՈւՄ ճառագայթման թվային ժամանակի կարգավորում՝ 1 րոպեից 24 ժամ, ավելացման քայլը՝ 1 րոպե, ՈւՄ-վերաշրջանառող 1x25Վ (արդյունավետություն >99%/ժամ) Ցերեկային լուսային լամպ (աշխատանքային տարածքի լուսավորության համար) 1 x TLD-15Վ, Կողային վահանակների հաստությունը՝ առնվազն 4 մմ Վերին առջևի վահանակի հաստությունը՝ առնվազն 8 մմ, Օպտիկական թափանցելիություն՝ առնվազն 92%, ՈւՄ պաշտպանություն >99.90%, Աշխատանքային տարածք՝ առնվազն 645 x 490 մմ Բացման չափսեր (ամբողջությամբ բարձրացված պաշտպանիչ էկրան)՝ առնվազն 645 x 165 մմ Պահարանի ներսում գտնվող էլեկտրական վարդակներ՝ էլեկտրական լարերի մուտք Ընդհանուր չափսեր (Լայնություն x Խորություն x Բարձրություն)՝ առնվազն 720 x 535 x 555 մմ Քաշ՝ 23 կգ Էներգիայի սպառում՝ 67 Վտ Նոմինալ աշխատանքային լարում՝ 100-240 Վ, 50/60 Հց Ապրանքը բարձր որակի է, նոր, չօգտագործված, չի պարունակում կիսամաշ դետալներ, իսկ փաթեթը՝ չվնասված և ապահովված համապատասխան պահպանման պայմաններով մատակարարման ամբողջ ընթացքում: Մատակարարումը և տեղադրումը, ինչպես նաև անհրաժեշտ միացումները պետք է իրականացվեն մատակարարի կողմից: Առկա է արտադրողի հավաստագիրը, և մատակարարվի ստուգաչափված

			վիճակում առկա բոլոր փաստաթղթերով: Տեղադրելուց և աշխատանքային վիճակի բերելու հետո երաշխիք 1 տարի: Մատակարարումից առաջ համաձայնեցնել պատվիրատուի հետ:
--	--	--	---

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

Концерн-Энергомаш ЗАО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом БТЗ-ЕЦДЦПЗР-26/96 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар		
	марка	наименование производителя	технические характеристики
5			